«ՎԻԱ ՎԻՏԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՀՀ Կառավարության 23.01.2025 թ. N 76-Ն որոշման համաձայն)

ք. Երևան 5 դեկտեմբերի 2025 թ.

«Վիա Վիտա ճանապարհորդություն և խորհրդատվություն» ՍՊԸ ղեկավարների և աշխատողների կողմից պահպանման ենթակա են հետևյալ կանոնները՝

ա. սպառողին տրամադրվող տեղեկատվությունը պատշաճ և ամբողջական ներկայացնելը,
բ. սպառողին մոլորեցնող տեղեկատվություն տրամադրելը բացառելը,
գ. զբոսաշրջային ծառայությունների համար գործող զեղչերի մասին տեղեկատվություն տրամադրելը,
դ. սպառողների մասնավոր կյանքի մասին տեղեկությունների հավաքագրումը բացառելը, սպառողի հետ հաղորդակցվելիս ոչ պատշաճ արտահայտություններից ձեռնպահ մնալը,
ե. որևէ տեսակի խտրականությունը բացառելը,
զ. բացառել մրցակից կազմակերպությունների մասին բացասական տեղեկություններ տրամադրելը, հրապարակելը, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով, կամ նրանց մասին արատավորող կամ զրպարտող տեղեկություններ հայտնելը կամ տարածելը կամ որևէ կերպ երրորդ անձանց հասանելի դարձնելը,
է. բացառել այլ մշակույթների կամ ավանդույթների մասին սպառողի հետ սպեկուլյատիվ բնույթի խոսակցություններ վարելը՝ առանց այդ տեղեկատվության մասին հավաստի աղբյուրներից բավարար գիտելիքներ ունենալու,
ը. հետագայում՝ նաև ներգնա այցեր կազմակերպելու մասին որոշման դեպքում, Հայաստանի Հանրապետության, դրա պատմության կամ Հայաստանի Հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների մասին տեղեկություններ տրամադրելիս չաղավաղել դրանք, ներկայացնել բացառապես հավաստի աղբյուրներից ձեռք բերված տեղեկություն,
թ. էթիկայի կանոնները խախտելու համար հայտարարվում է նկատողություն, այնուհետև՝ կրկնվելու դեպքում՝ զգուշացում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին, այնուհետև՝ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել գործատուի նախաձեռնությամբ:

Տնօրեն՝ Զոհրակ Հովհաննիսյան